ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «22» 05 2025թ

№ 1422-Լ

«ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2025-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշման N 4 հավելվածի 28-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների ծրագրի մասնակցության դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի 05.22-ի N 1922-Լ հրամանի

Ձև

ՀՀ էկոնոմիկայի նախարարին

_____-ից
իրավաբանական/ֆիզիկական անձի անվանում/անուն, ազգանուն

_____
հեռախոս, էլ. հասցե

«Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի մասնակցության

ԴԻՄՈՒՄ

Ես՝ _____ ցանկանում եմ մասնակցել «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրին և ՀՀ _____ մարզի _____ համայնքում կառուցել ☐ կամ ☐ վերակառուցել

☐ 1-ին մոդել՝ նախատեսված է անկապ պահվածքով 20-25 գլուխ կենդանու համար:

☐ 2-րդ մոդել՝ նախատեսված է անկապ պահվածքով 40-45 գլուխ կենդանու համար:

☐ 3-րդ մոդել՝ նախատեսված է անկապ պահվածքով 95-100 գլուխ կենդանու համար:

- Համաձայն եմ, որ ծրագրի իրականացման վերաբերյալ պայմանագրում ամրագրվի, որ անասնաշենքը առնվազն 5 տարի պետք է նպատակային օգտագործվի և անասնաշենքը շահագործման հանձնվի պայմանագիրը կնքելու պահից մեկ տարվա ընթացքում:
- Անասնաշենքի կառուցումն իրականացվելու է բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Դիմող՝ _____
(դիմումատուի կամ լիազորված անձի անունը, ազգանունը)

_____
(ստորագրությունը)

.... 20____թ.